Կոնդակ Կարսի փոխանորդ Տ. Երեմիա վարդապետ Ստեփանեանի անունով, որով վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց. 28 մարտի. Թ. 501.

Կոնդակ Տաթևի փոխանորդ և վանահայր Տ. Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանի անունով, որով վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց. 28 մարտի. Թ. 502.

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Թ. 62. փետրուարի 1/2 Սինօդը որոշեց. շրջաբերականով պատուիրել բոլոր կոնսիստորիաներին մինչև մարտի 1-ը պահանջել և ուղարկել Սինօդ ապառիկ ծախուած բոլոր եկեղեցական նատեսակ մատեանների գները.

Թ. 64. փետրուարի 6/7 Սինօդը որոշեց. պատուիրել Մայր Աթոռի վանական կառավարութեանը, որ Մայր Աթոռի «քարահանքը» նորից տայ կապալով երեք տարի ժամանակով. նախօրօք աճրդախօսութեան պայմանների ծրագիրը ներկայացնելով Սինօդ.

Թ. 65. փետրուարի 6/7 Սինօդը նկատի առնելով, որ Գեղարդայ վանքի «Ղանլի-բուրդ» կոչուած վարելահողերի վարձով տալու երեք տարին լրացած է և կապալադրամները ստացուած է, որոշեց. պատուիրել Երևանի կոնսիստորիային, որ նորից աճուրդով տայ յիշեալ հողերը.

Թ. 70. փետրուարի 6/7. Սինօդը որոշեց յանձնել Քեանդակ գիւղի Յարութիւն քահանայ Տէր Յովհաննիսեանին և Հաւարիկ գիւղի Եղնիկ քահանայ Տէր Գաբրիէլեանին ի դատ մարմնաւոր իշխանութեան Գանձակի նահանգական դատարանի պ. պրոկուրորի միջոցով, համաձայն պատժ. օր. 1575 յօդ. արենակցական 6-րդ աստիճանի չհաս պսակ կատարելու համար.

Թ. 71. փետրուարի 6/7. Սինօդը լսելով Նոր-Նախիջևանում վերաքննուող Ստեփաննոս քահանայ Պապայեանի

բողոքը Բեսսարաբիայի թեմի առաջնորդ Տ. Ներսէս արքեպիսկոպոսի դէմ, որոշեց. թողնել յիշեալ քահանայի բողոքը առանց հետեւանքի՝ հիմքից զուրկ լինելու համար։

Թ. 62. փետրուարի 6/7, Սինոդը լսելով Թէոդոսիայի 21 ծխականների բողոքը տեղի ծխատէր Արշաւիր քահանայ Վարդանեանի դէմ, որոշեց պատուիրել Բեսսարաբիայի կոնսիստորիային հեռացնել Վարդանեան քահանային Թէոդոսիայի ծխականների հովուութիւնից այն դէպքում, երբ կոնսիստորեան կամ ինքը՝ քահանան կը գտնեն նորա համար քահանայագործելու մի այլ ծուխ։

Թ. 81. փետրուարի 12, Սինոդը լսելով Կովկասի Փոխարքայի դիւանատան յունուարի 28-ի № 2828 գրութիւնը, որով յայտնում է, թէ ի հետեւումն Ղարաբաղի թեմական դպրանոցի հոգաբարձութեան նախագահ Ջաւէն վարդապետի միջնորդութեան, Փոխարքան թոյլ տուեց նուիրատուութիւններ ժողովել փոխարքայութեան սահմաններում. հայ ազգաբնակութեան մէջ, մինչեւ այս սեպտեմբերի 1-ը. Ղարաբաղի թեմական դպրանոցի օգտին, նորա 75-ամեայ յոբելեանի առթիւ, որոշեց տալ թեմական դըպրանոցի օգտին կատարուելիք հանգանակութեան համար Ղարաբաղի թեմի կառավարչին մի ժապաւինեալ մատեան հանգանակութիւն անելու Փոխարքայի № 2828 թոյլտուութեան թղթի պատճէնի հետ միասին, պատուիրելով հանգանակութիւնից յետոյ մատեանը ուղարկել Սինոդ ի ստուգութիւն եւ ի տնօրէնութիւն։

Թ. 83. փետրուարի 13/16. Սինոդը՝ լսելով Կովկասի Տ. Փոխարքայի այս տարուայ յունուարի 14-ի № 1477 գրութիւնը, Ղազախի գաւառի Թաուզքենդ գիւղի բնակիչ Յարութիւն Գիւրջանեանցի որդի Վահանին Տփխիսի կոնսիստորիայից ընտանեկան արտօնութիւն տալու համար տուած № 3478 մետրիքական վկայական տալու մասին, որոշեց. զգուշութիւն գրել Թիֆլիզի կոնսիստորիային, որ, ինչպէս երեւում է Փոխարքայի № 1477 գրութիւնից, հարկաւոր զգուշութեամբ չէ վարուել Թաուզքեանդ գիւղի

բնակիչ Յարութիւն Գիւրջանեանցին ծննդական վկայական տալու դէպքում, յայտնել նաև շրջաբերականով Կովկասի մուս թեմերի առաջնորդներին Փոխարքային գրութեան իմաստը և պատուիրել, որ ապագայում՝ չկրկնուեն այլ ևս նման դէպքեր։

Թ. 84. փետրուարի 13/16, Սինոդը՝ լսելով Երևանի կոնսիստորիայի անցած տարուայ յուլիսի 10-ի թ. 4694 յայտարարութիւնը, որով խնդրում է Աղէքսանդրապոլի գաւառի Ղազանչի գիւղի բնակիչ Տիգրան Տէր Մկրտչեանին թոյլ տալ քահանայ ձեռնադրելու նոյն գիւղի ծխականների համար, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Տիգրան Տէր Մկրտչեանին և յանձնարարել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ Ղազանչի գիւղի ծխականների համար։

Թ. 85. փետրուարի 13/16, Սինոդը լսելով Երևանի կոնսիստորիայի անցած տարուայ մայիսի 9-ի թ. 2734 յայտարարութիւնը, որով խնդրում է թոյլ տալ ձեռնադրել քահանայ Կարսի շրջանի Գերմանլի գիւղի բնակիչ Սարգիս Շահինեանին այդ գիւղի ծխականների համար, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Սարգիս Շահինեանին և յանձնարարել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ Գերմանլի գիւղի ծխականների համար։

Թ. 88. փետրուարի 15/16, Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի անցած փետրուարի 10-ի թ. 282 կոնդակը, որով յայտնում է, թէ Կովկասի Տ. Փոխարքան նոյն ամսի 5-ի № 3847 գրութեամբ տեղեկացրել է, թէ Բարձրագոյն Հրամանով Ամենապատուելի Հրամայուած է Սինոդի անդամ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին լինել Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ, իսկ այդ թեմի ժամ. կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսը հաստատուած է Սինոդի անդամ, որոշեց. նախ՝ ճանաչել Տ. Մեսրոպ եպիսկոպոսին Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ և երկրորդ՝ Տ. Եփրեմ եպիսկոպոսին Սինոդի անդամ։

Թ. 89. փետրուարի 15/16, Սինոդը՝ լսելով Պետերբուրգի վերաբնակչութի օրիորդ Եղիսաբէթ Մկրտչեան Հայրապետեանի Վեհափառ Կաթուղիկոսի անունով տուած անցած դեկտ. 12-ի խնդիրը, որի հետ ուղարկելով մի հազար ռուբլի խնդրել է Նորին Սրբութիւնից կարգադրել գործադրել այդ դրամը ս. Գայեանէի վանքի նորոգութեան վերայ, որոշեց. պատուիրել Մայր Տաճարի վերանորոգութեան Յանձնաժողովին կատարել ս. Գայանէի վերանորոգութիւնը և իւրաքանչիւր տարի հոգեհանգիստ կատարել՝ ապրիլի 12-ին ի յիշատակ նուիրատուի հօր Մկրտիչ Հայրապետեանի և դեկտ. 9-ին ի յիշատակ նուիրատուի մօր Հռիփսիմէի։

Թ. 91. փետրուարի 16/18, Սինոդը, լսելով Վեհափառ Կաթուղիկոսի փետրուարի 8-ի թ. 266 կոնդակը, որով ուղարկելով Ներքին Գործերի Նախարարի յունուարի 30-ի թ. 1084 գրութեան պատճէնը, առաջադրում է կարգադրել, որպէս զի դպրոցական դրամագլխի (ֆոնդի) անունով եկեղեցական–ծխական դպրոցների օգտին կամաւոր նուիրատուութիւններ ժողովուին և Աստրախանի ու Բեսարաբիայի թեմերում, Նախարարի թոյլտուութեան համաձայն, որոշեց. ուղարկել նուիրատուութեան վերաբերեալ տպագրած ժապաւինեալ տոմարները և թերթերը, պատուիրել Նոր–Նախիջևանի և Բեսարաբիայի և Աստրախանի թեմական առաջնորդներին իրենց թեմերի հայաբնակ քաղաքներում և գիւղերում կազմակերպել ժողովարարութեան գործը Յանձնախմբի ղեկավարութեամբ և ստացուող դրամը փոխադրել Սինոդ։

Թ. 94. փետրուարի 27, Սինոդը լսելով Նոր–Բայազէտի բնակիչ Արամ Նիկողոսեանի խնդիրը, որով խընդրում է տալ իրեն վարձով Ջնու մօտ գտնուող «Բեօթաքլու» արօտատեղը կաթնատնտեսութեան համար, որոշեց. կապել Նիկողոսեանի հետ պայման նրան վարձով տալու «Բեօթակլու» հողը, տասն երկու տարով կաթնատնտեսութեան համար։

Թ. 100. մարտի 1/2. Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի անցած փետրուարի 4-ի № 247 կոնդակը, որով յայտնում է, թէ Հայոց Ազգային ընկերութիւնը անցած տարուայ յունիսի 22-ին Աղէքսանդր Մելիք-Ազարեանի, Համբարձում Մելիքեան և Երուանդ Լալայեանի ձեռքով խնդրել է իրեն թոյլ տալ Ընկերութեանը Տփխիսում աւագ եկեղեցու արևմտեան կողմը գտնուող վանքապատկան հողի վերայ շինել Ազգային-Հնագիտական թանգարան, որոշեց. յանձնել Հայոց Ազգային ընկերութեան Տփխիսի աւագ եկեղեցու արևմտեան կողմը գտնուող էջմիածնապատկան հողը Ազգային-Հնագիտական թանգարան շինելու համար, պարտաւորեցնելով յիշեալ ընկերութեանը, որ բոլոր պաշտօնական գրութիւնների և վաւերագրերի մէջ այն շէնքը լինի ս. Էջմիածնի անունով իբրև մշտնջենական սեպհականութիւն Մայր Աթոռի։

Թ. 104. մարտի 2. Սինոդը լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ փետրուարի 27-ի թ. 367 կոնդակը, որով յայտնում է, թէ Կրասնոդար քաղաքի Ծխատէր Վահան ա. քհն. Տ. Գրիգորեանը փետրուարի 27-ին ստացաւ արեղայութեան կոչում և վարդապետական աստիճան։ Փոխարքայի նախընթաց հաւանութեամբ Նորին Սրբութիւնը նշանակում է նրան Տաթևի վանքի վանահայր և փոխանորդ, ուստի Սինոդը որոշեց. Վահան վարդապետի անունը մտցնել կուսակրօն հոգևորականների շարքը իբրև Տաթևի վանքի միաբան և ճանաչել նրան նոյն վանքի վանահայր և վիճակի փոխանորդ։

Թ. 106. մարտ 2. Սինոդը որոշեց պատուիրել Աստրախանի կոնսիստորիային կարգադրել անյապաղ հեռացնել Մերվ քաղաքի Ծխատէր Արշակ քահանայ Տէր Ոսկանեանին այն վարչական պաշտօններից, որ նա անկախ քահանայագործութիւնից ունի, մինչև նորա դատական գործի վախճանը, որ քրէական պատասխանատուութեան է ենթարկուած նա պատժ. օր. 102 յօդ. 2 մ.։

Թ. 113. մարտի 4/5 Սինոդը՝ լսելով Աղէքսանդրապոլի

գաւառի Մեծ-Արխվալի գիւղի Ղեւոնդ քահանայ Աթանասեանի մեզադրական գործը իւր կոչմանն անվայել ընթացքի մասին, որոշեց· փոխել կոնսիստորիայի վճիռը նորան կարգալոյծ անելու մասին և նորա ըմբոստ ու յանդուգն վարուեցողութիւնների համար նշանակել նրան երեք ամիս ապաշխարանք Անիում։

Թ. 118. մարտ 8/9, Սինոդը՝ լսելով Զեյնալօրեան Նահանգի Գագրա գիւղում վերաբնակուող Գրիգոր քահանայ Գարաքեհեանի մեզադրական գործը, որոշեց· ընդմիշտ դադարեցնել քահանայագործութիւնից Գրիգոր քահանայ Գարաքեհեանին աւագ շաբաթ օրը պսակ կատարելու և հոգևորականին ոչ վայել կենցաղավարութեան համար, իսկ նրա միւս մեզադրական գործերը, համաձայն փետրուարի 21-ի Բարձրագոյն Հրովարտակի, դադարեցնել։

Թ. 120. մարտի 11/12, Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթողիկոսի այս տարուայ յունուարի 29-ի Թ. 209 կոնդակը, որով պատուիրել է Սինոդին կարևոր կարգադրութիւններ անել հանգուցեալ բժշկապետ Աղէքսանդր Տիգրանեան Տէր Յարութիւննեանի կտակի գործադրութեան վերաբերմամբ, որով հանգուցեալ Տէր Յարութիւնեանը իւր շարժական և անշարժ գոյքը կտակում է թէ Մայր Աթոռի օգտին, և թէ այդ գումարով առնուի հողեր Տաճկաստանի հայաշատ վիլայէթներում արտասահման գաղթած բնիկ Տաճկաստանցի հայերի վերաբնակեցնելու համար. կտակակատարներ է նշանակում Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին և Կ. Պօլսի Հայոց Պատրիարքին, որոշեց. նախ՝ ուղարկելով Դ. Մկրտումեանի 825 ռուբլու երկու մուրհակը, յանձնարարել հաւատարմատար Համազասպ քահանայ Ղարադեօզեանին պահանջել այդ գումարը, իւր օրինական տոկոսներով, Մկրտումեանից, յօժարակամ, հակառակ դէպքում՝ դատարանով, երկրորդ՝ խնդրել փոխադրել պետական դրամատան Երևանի բաժանմունքը, Վեհափառ Կաթողիկոսի անունով, պետական խնայողական գանձարանից 904 ռ. 95 կ., իւր օրինական

տոկոսներով, պետական դրամատան Վարչական գրասենեակից՝ պահ տուած 15000 ռուբլու արժէթղթերը, իրենց տոկոսներով և 70 ռուբլի դրամը, երրորդ՝ խնդրել Կարսի փոխադարձ ընկերութեանը պահ տուած 2760 ռ. 21 կոպէկից տալ Կարսի Հոգևոր Կառավարութեանը նորա ծախսած 477 ռ. 50 կոպէկը, Կարսի Համազգաց քհնյ. Ղարագեօզեանին նորա ծախսած 7 ռ. 82 կոպ., ուղարկել Սինոդիս անունով՝ կտակարարի ծառային և լուացարարին տուած 26 ռ. 75 կ., քաղաքային հարկի համար վճարած 30 ռուբ., և նոտարական ծախքը 38 ռ. 52 կոպ.. ապա դուրս գալով Նատալիա Տիգրանեանին հասանելի տարեկան 600 ռուբլուց ժառանգական տուրքի համար նորա փոխարէն վճարած 374 ռ. 40 կոպ., մնացորդը (600 ռ.— 374 ռ. 40 կ.) 225 կ. 60 կ. ուղարկել Նատալիա Տիգրանեանին պետական դրամատան Տփխիսի գրասենեակի միջոցով, և ապա պահ տուած գումարի և նրա տոկոսների մնացորդը փոխադրել պետական դրամատան Երևանի բաժանմունքը Վեհափառ Կաթուղիկոսի անունով, չորրորդ՝ ուղարկելով Տէր Յարութիւնեանցի կտակած Կարսում գըտնուող անշարժ կալուածների ցուցակի պատճէնը յանձնարարել Կարսի փոխանորդին հակել կալուածների վերայ, ժամանակին ստանալ եկամուտները և փոխադրել պետական դրամատան բաժանմունքը Վեհափառ Կաթուղիկոսի անունով իբրաքանչիւր անգամ տեղեկութիւն տալով դրամը ուղարկելու մասին Նորին Սրբութեանը և Սինոդիս, հինգերորդ՝ յայտնելով Կարսի Հաշտարար դատաւորին № 191 գրութեան հետ, ուղարկած դրամական վաւերաթղթերի Սինոդում ստացուած լինելու մասին, խնդրել ուղարկել կտակած գոյքի կառավարութեան մասին ներկայացրած տարեկան տեղեկագիրը կամ նոցա պատճէնները, վեցերորդ՝ տալով, կտակի և այս օրագրի պատճէնները՝ պատուիրել Սինոդի Հաշուարարական մասին առանձին գործ և հաշիւ վարել Տէր Յարութիւնեանցի կտակած դրամագլխի մասին, մուտք գրել հետզհետէ այն բոլոր գումարները, որ կը ստացուին և կամփոփուին պետական դրամատան Երևանի

բաժանմունքը, աւելացնելով մուտքի վերայ այն բոլոր գրամները, որ ներկայ հրամանով տրուելու են Կարսի Հոգևոր Կառավարութեանը, (477 ռ. 50 կ.), Ղարագեօզեան քահանային (7 ռ. 82 կ.), Նատալիա Տիգրանեանին (225 ռ. 60 կ.) և տրամադրելու է Սինօդը (95 ռ. 27 կ.). ելք գրել Տէր Յարութիւնեանի դրամագլխից արդէն ծախսած վերջին գումարները՝ 806 ռ. 19 կ., որից մուտք գրել Մայր Աթոռի տոմարում ստացուող 95 ռ. 27 կոպ., և ապա գանձել ժամանակին կտակած արժէթղթերի և դրամագլխի տոկոսները, միացնել ստացուող արդիւնքը դրամագլխին, որի մասին իւրաքանչիւր անգամ զեկուցում ներկայացնել Վեհափառ Կաթողիկոսին. Եւ եօթներորդ՝ այս օրագրի պատճէնը ներկայացնել Նորին Սրբութեանը, որպէս կտակակատարի.

Թ. 130. մարտի 18/19. Սինօդը՝ լսելով Շամախու կոնսիստորիայի անցած տարուայ նոյեմբերի 3-ի Թ. 2137 յայտարարութիւնը, որով ներկայացրել է Սինօդի տնօրէնութեանը Դերբենդի ծխական ժողովի 1912 թ. յուլիսի 2-ի արձանագրութիւնը, որով ժողովը շահաւէտ է համարել գնել եկեղեցու օգտին Պետրոս Բիւրցեղեանի և Անանիա Միքայէլեանի խաղողի այգիները, որի համար Սինօդը ստացել է Կովկասի Տ. Փոխարքայի հաւանութիւնը գնելու եկեղեցու անունով Բիւրցեղեանի և Միքայէլեանի այգիները 2300 ռուբլով, որոշեց. ուղարկել Կովկասի Փոխարքայի դիւանատան № 5350 գրութեան պատճէնը, պատուիրել Շամախու կոնսիստորիային կարգադրել գնել Բիւրցեղեանի և Միքայէլեանի այգիները 2300 ռուբլով Դերբենդի եկեղեցու անունով.

Թ. 132. մարտի 18/19. Սինօդը՝ լսելով Աստրախանի կոնսիստորիայի անցած տարուայ դեկտեմբերի 12-ի № 4730 յայտարարութիւնը, որի հետ ներկայացնում է Կուբանի շրջանի Արմաւիր գիւղի հասարակական ժողովի 1912 թ. յուլիսի 24-ի № 115 վճիռը և Արմաւիրի հայոց եկեղեցիների ծխականների նոյն թուի սեպտ. 2-ի վճիռը, որոնցով հասարակութիւնը որոշել է Նորակառոյց ս. Գէորգ եկեղեցին աւարտելու համար յատկացնել հասարակութեան

միջոցներից 5000 ռ. և միջնորդութիւն յարուցանել, որպէս զի գիւղի ս. Աստուածածին եկեղեցու գրաքներից առանց տոկոսի պարտք տրուի ս. Գէորգ եկեղեցուն նոյն նպատակով 15000 ռ., այն պայմանով, որ այդ գումարը վճարուի ս. Գէորգ եկեղեցու եկամուտներից տարեկան ոչ պակաս քան 600 ռուբլի, որոշեց. թոյլ տալ Արմաւիրի ս. Աստուածամօր եկեղեցուն պարտք տալ իւր գրամագլխից առանց տոկոսի տասն և հինգ հազար ռուբլի տեղի ս. Գէորգ եկեղեցին աւարտելու համար, այն պայմանով, որ այդ գումարը յետ դարձնուի ս. Գէորգ եկեղեցու գումարներից տարեկան ոչ պակաս քան վեց հարիւր ռուբլի։

Թ. 133. մարտի 18/19. Սինոդը՝ լսելով Շամախու կոնսիստորիայի այս տարուայ փետրուարի 14-ի թ. 257 յայտարարութիւնը, որով յայտնում է, թէ Բագուի քաղաքապետի գիւանը անցած տարուայ դեկտ. 31-ի թ. 22939 գրութեամբ թոյլ է տուել Բագուի դարձակալին ընդունել Հայաստանեայց եկեղեցու ծոցը Բագուեցի մահմեդական Սադիխ Մէշէդի Այիբովին, որոշեց. պատուիրել Շամախու կոնսիստորիային ուղարկել Սադիխ Մէշէդի Այիբովին Սաղիանի վանքը ստորելու Հայաստանեաց եկեղեցու գիտելիքները և այնտեղ էլ մկրտուել և ապա նկատել Բագուի դարձակալին, որ Սինոդի շրջաբերականի համաձայն հայադաւանութիւն ընդունող մահմեդականների խնդիրները պէտք է ներկայացնել Սինոդին, որ և հարցնելու է քաղաքական իշխանութեան հաճութիւնը։

Թ. 134. 18/19 մարտի. Սինոդը՝ լսելով Բագուի վերաբնակիչ ազնուական Կարապետ Լալայեանցի փետրուարի 20-ի գրութիւնը, որով յայտնում է, թէ դրդուած դէպի իւր ազգն ունեցած սիրուց վճռել է իւր ոյժերը ներածին չափ նուիրատուութիւն անել իւր ազգի ուսաւորութեան և տնտեսական վիճակի բարելաւման համար, այդ նպատակով նուիրում է 50000 ռ., որից 10000 ռ. արդէն տուել է Բագուի Հայոց Կուլտուրական Միութիւնը, այդ Միութեան համար անպիտան բնակարան շինելու համար, այժմ ցանկութիւն է յայտնում իրականացնել իւր մտադրութեան միւս մասը,

այնպէս որ իւր նուիրաբերելի 40000 ռ. գրամագլուխը ընդմիշտ մնայ անձեռնմխելի, իսկ եկամուտը ստանայ Բագուի Հայոց Կուլտուրական Միութիւնը՝ գործադրելու համապատասխան նուիրաբերողի նպատակներին։ Իսկ նուիրաբերութիւնը ցանկանում է նա յանձնել ս. Էջմիածնի Մ. Աթոռին։ Մայր Աթոռը յանձին Սինոդի, ընդունելով նուէրը, տոկոսների ստացումը յանձնելու է Բագուի Հայոց Կուլտուրական Միութեանը. իսկ եթէ Կուլտուրական Միութիւնը այս կամ այն պատճառով կը դադարի գոյութիւն ունենալուց, իւր նուիրատուութիւնը մնալու է իբրև Մայր Աթոռի սեպհականութիւն, այն պայմանով, որ գրամագլուխը մնայ անձեռնմխելի, իսկ տոկոսներով պահուի որ և է կրթական հաստատութիւն, որոշեց. ընդունելով Կարապետ Էլայեանցի նուէրը իւր առաջարկած պայմաններով, լիազօրել Բագուի Եղիշէ ա. քհնյ. Գեղամեանին ստանալ նուէրը օրինական կարգով ս. Էջմիածնի վանքի անունով, որի համար խնդրել Ներքին Գործերի Նախարարի թոյլտուութիւնը և ապա յանձնել նուիրատուութեան եկամուտը ստանալու իրաւունքը Բագուի Հայոց Կուլտուրական Միութեանը։

Թ. 140. մարտի 25/26, Սինոդը լսելով Վեհափառ Կաթուղիկոսի անցած մարտի 14-ի թ. 426 մակագրութիւնը, որի հետ ուղարկել է Թադուհի Կայսրուհու խնամատարութեան ներքոյ գտնուող խուլերի և համրերի Հոգաբարձութեան Կովկասի Բաժանմունքի խորհրդի № 22 գրութիւնը, որով Հոգաբարձական խորհուրդը խնդրում է շրջաբերական կարգադրութիւն անել, անցած տարիների նման, որպէս զի խուլերի և համրերի օգտին 1913 թ. ապրիլի 7-ին գանձանակ շրջեցնուի երեսփոխանների ձեռքով հետևեալ քաղաքների Հայոց եկեղեցիներում. Տփխիսի, Գորու, Ախալցխայի, Ախալքալակի, Բաթումի, Սղնախի, Թէլաւի, Զաքաթալայի, Գանձակի, Սուխումի, Փոթիի, Երևանի, Ազէքսանդրապօլի, Կարսի, Նախիջևանի, Բագուի, Շուշու, Ցխինվալի և Սուրմալուի, որոշեց. պատուիրել Վրաստանի Հայոց, Շամախու թեմական առաջնորդներին, Երևանի փոխ-թեմականին և Ղարաբաղի թեմ. ժամ. կառավարչին

Վեհափառ Կաթուղիկոսի մակագրական առաջադրութեան համաձայն կարգադրել, որ իրենց թեմերի հայոց եկեղեցիներում առաջիկայ տպրիլի 7-ին, գանձանակ շրջեցնուի խուլերի և համրերի օգտին երեսփոխանների ձեռքով, որոնք և փոխադրեն դրամը ուղղակի Հոգաբարձութեան անունով և դրամի փոխադրութեան մասին տեղեկացնեն թեմի առաջնորդին։

Թ. 141. մարտի 25/26. Մինօդը լսեց Վեհափառ Կաթուղիկոսի անցած մարտի 14-ի թ. 436 մակագրութեամբ ուղարկած Ղարաբաղի թեմի ժամ. կառավարչի № 917 յայտարարութիւնը և Բիւզանդ Թորոսեանի փետրուարի 25-ի խնդիրը. Նորին Սրբութիւնը յայտնում է, թէ ընդունում է Թորոսեանին Ամարասի վանքի միաբան նորա խնդրի և Զաւէն վարդապետի միջնորդութեան համաձայն. որոշեց. Բիւզանդ Թորոսեանին ընդունել հոգևոր կոչման մէջ և ճանաչել Ամարասի վանքի միաբան։

Թ. 144. մարտի 28/28. Մինօդը՝ լսելով Երևանի կոնսիստորիայի անցած տարուայ սեպտեմբ. 21-ի թ. 7502 յայտարարութիւնը, որով խնդրում է Աղէքսանդրապոլի գաւառի Ազին գիւղի բնակիչ Կարապետ Տէր Գէորգեանին թոյլ տալ ձեռնադրել քահանայ նոյն գիւղի ծխականների համար, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Կարապետ Տէր Գէորգեանին և յանձնարարել փոխ-թեմակալին ձեռնադրել նորան քահանայ Ազին գիւղի ծխականների համար։

Թ. 145. մարտի 27/28. Մինօդը լսելով Երևանի կոնսիստորիայի անցած տարուայ դեկտեմբերի 27-ի թ. 10268 յայտարարութիւնը, որով խնդրում է Երևանի գաւառի Զիգդամլու գիւղի բնակիչ Սահակ Տէր Թովմասեանին թոյլ տալ ձեռնադրել քահանայ նոյն գիւղի ծխականների համար, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Սահակ Տէր Թովմասեանին և յանձնարարել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ Զիգդամլու գիւղի ծխականների համար։